«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ **<< ՏՀՏ-ի կիրառումը անգլերենի դասավանդման ընթացքում>>**

ԱՌԱՐԿԱ **Անգլերեն**

ՀԵՂԻՆԱԿ **Լուսինե Սարգսյան** Ֆրունզե

ՄԱՐԶ **Ք. Երևան**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ **Էդ. Բոյաջյանի անվան հ. 121 հիմնական դպրոց**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն——————————————————————————————2

Ներածություն——————————————————————————————3

Գլուխ 1 «ՏՀՏ-ի կիրառումը անգլերենի դասավանդման ընթացքում»——————————5

1.1 ՏՀՏ գործիքների կիրառման դերն ու նշանակությունն անդասավանդման

Գործընթացում ——————————————————————————5

1.2 Դասավանդման մեր փորձից—————————————————————— 12

Եզրակացություններ——————————————————————————15

Օգտագործված գրականության ցանկ——————————————————————16

Հավելվածներ——————————————————————————17

Ներածություն

Հոդվածում ներկայացված են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն անգլերենի դասավանդման գործընթացում: Հանրակրթության նպատակը ոչ միայն գիտելիք փոխանցելն, այլ նաեւ բանիմաց քաղաքացի ձեւավորելն է, ով կկարողանա կողմնորոշվել ժամանակակից տեխնոլոգիաների աշխարհում: Մեր օրերում կրթության ոլորտի ներկայացուցիչները վաղուց են համոզվել, որ գրեթե անհնար է հասնել կրթական նոր մարտահրավերներով պայմանավորված բարեփոխումներին առանց կրթության մեջ հաղորդակցական տեխնոլոգիանրի կիրառության:: Ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը շատ կարևոր է ուսուցումն անհատականացնելու համար: Սովորողները պետք է կարողանան ձեռք բերել, գնահատել, արժևորել և փոխանցել տեղեկությունները: Տեխնոլոգիաների կիրառման արդյունքում զարգանում են սովորողների մտածողությունն ու համակարգչային գրագիտության հմտությունները : Այսօր ՀՀ բոլոր դպրոցներն ունեն համակարգչային դասասենյակներ եւ համացանցին միանալու հնարավորություն, ներդրվել է էլեկտրոնային գնահատման համակարգ: Կան բազմաթիվ ուսուցիչներ, ովքեր գնահատում են նորարարությունները, սիրով գնում դրանց ընդառաջ: Պետք Համակարգչային տեխնոլոգիաները, կրթական պաշարները, էլեկտրոնային ուսուցումը և տեղեկատվական կայքերն արդյունավետ չեն լինի, եթե նրանց կիրառումը կրի անջատ և ոչ նպատակամղված բնույթ:

Կարծում ենք ուսուցիչը պետք է հասկանա թե ինչ թե տեղեկատվական տեխնոլոգիա, էլեկտրոնային ուսուցում և թե դրանք որքանով են հեշտացնում թե՛ իր՝ ուսուցչի գործը, թե՛ սովորողների՝ առարկան հասկանալու, թեմաներն ընկալելու խնդիրը: ԵՎ ամենակարևորը ուսուցչին անհրաժեշտ են համապատասպան պաշարներ ու դրանք կիրառելու հմտություններ: ՏՀՏ կիրառումը մեծապես աջակցում է նաեւ անգլերենի դասավանդման գործընթացում: Տեղեկատվական տեխնոլոգիաները նպաստում են սովորողների տրամաբանական ու ստեղծագործական մտածողության զարգացմանը, խթանում են ինքնուրույնությունը, դարձնում նախաձեռնող, ձեւավորում թվային եւ մեդիա կարողունակությունը: Ուստի կարեւոր ենք համարում այդ թվում եւ անգլերենի դասի ընթացքում ՏՀՏ գործիքների կիրառումը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ելնելով կրթական ոլորտում օրեցօր իրականացվող բարեփոխումներից՝ օրապահանջ է դասին ՏՀՏ գործիքների շարունակական

կիրառումը: Հենց այս կարեւորագույն հանգամանքով էլ պայմանավորել են տվյալ ուսումնասիրության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակ: Տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով(համակարգչով, էլէկտրոնային գրատախտակով կազմակերպվող դասեր, տեսասահիկի, խաղերի, գծագրերի, տեսանյութի, նկարների միջոցով ցուցադրվող դաս) զարգացնել երեխաների ճանաչողական, մտավոր, կարողությունները, ուսումնասիրել ՏՀՏ-ի կիրառման հնարավորությունները անգլերենի ուսուցման գործընթացում:

Հետազոտության խնդիրներն են:

- կարևորել անգլերենի դասընթացի շրջանակենրում ՏՀՏ գործիքների կիրառման անհրաժեշտությունը, ցույց տալ դրանց զարգացնող ու մոտիվացնող նշանակությունը:
- ուսումնասիրել թեմային առնչվող գիտաուսումնական գրականությունը
- անդրադառնալ ուսումնական գործընթացում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների դերին
- կիրառել ՏՀՏ անգլերենի դասավանդման ընթացքում
- սահմանել քայլարշավ վերը նշված նպատակին հասնելու համար
- անդրադառնալ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների դերին անգլերենի դասավանդման ընթացքում:

Գլուխ 1 «ՏՀՏ-ի կիրառումը և կարևորությունն անգլերենի դասավանդման ընթացքում»

1.1 ՏՀՏ գործիքների կիրառման դերն ու նշանակությունն անգլերենի դասավանդման գործընթացում:

Կրթության մեջ ՏՀՏ կիրառության կարևորումը հատկապես վերջին տարիներին օրախնդիր է, կրթության արդիականացման բաղադրիչ: Պետությունն ամեն կերպ խրախուսում է այն ուսուցիչներին, ովքեր ինքնակրթվում են, գործընկերների հետ քննարկում ՏՀՏ օգտագործման փորձը, սովորում միմյանցից, ուսումնասիրում ու ներկայացնում միջազգային փորձը: «Անգլերեն» և «Ինֆորմատիկա» ուսումնական առարկաների կապն ակնհայտ է, ուստի ՏՀՏ բաղադրիչով անգլերենի դասերի անցկացումն անչափ կարևոր է: Այսօրվա ուսուցչի գերխնդիրն է դասը պլանավորել այնպես, որ սովորողների հետաքրքրությունը դասի ընթացքում չկորչի, սովորողի ակտիվությունը պահպանվի ամբողջ դասի ընթացքում: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է դասի պլանավորման ընթացքում ներառել այնպիսի արդյունավետ ուսումնական մեթոդներ և մեթոդական հնարներ, որոնք կակտիվացնեն դպրոցականներին, կխթանեն նրանց ինքնուրույն աշխատանքը, կզարգացնեն քննադատական մտածողությունն ու նախաձեռնությունը:

Պետք չէ մոռանալ, որ չնայած բոլոր մարտահրավերներին՝ համացանցը անսպառ գիտելիքի, տեղեկատվության, ինչպես նաև ժամանցի աղբյուր է երեխաների և դեռահասների համար:Անհրաժեշտ է օգտվել այդ հնարավորությունից՝ պահպանելով //երթևեկության կանոնները//:

Օգտվելով այդ անսպառ ռեսուրից՝ երեխաներն ու դեռահասները մեծ հնարավորություններ ունեն ոչ միայն սպառելու այդ տեղեկատվությունը, այլ նաև ստեղծելու իրենցը ու համայն աշխարհի հետ կիսելու իրենց մտքերը:

Օգնել ճիշտ ու անվտանգ օգտվել համացանցից՝ համատեղ սահմանելով անվտանգության կանոնները:

Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարգյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան:

Մեր մանկավարժական փորձին հղում անելով՝ կարող ենք փաստել, որ անգլերենի նկատմամբ հետաքրքրությունը սովորողների մեծամասնության մոտ կախված է նրանից, թե ինչ արդյունավետ մեթոդներով է ընթանում ուսուցման գործընթացը: Անհրաժեշտ է մտածել բոլոր սովորողների ներգրավածությունը ապահովելու մասին և օգտագործել այն որպես մեկնարկային կետ հետաքրքրության առաջացման և զարգացման համար, խորացնել ճանաչողական հետաքրքրություններն ու լեզվական կարողությունները: Ինքնուրույն ու նախաձեռնող սովորողի ձևավորումը կրթական համակարգի գլխավոր նպատակներից մեկն է: Սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումն ու զարգացումն այդ թվում և լեզուների դասավանդման ընթացքում նույնպես դիտարկվում 6 է որպես կրթության կարևոր խնդիր: Սովորողների ճանաչողական հետաքրքրությունները կարևոր հանգամանք են հանդիսանում ժամանակակից աշխարհում նորանոր հաջողություններ ունենալու, առկա խնդիրներին հեշտ լուծումներ տալու, նոր գաղափարներ իրականացնելու տեսանկյունից: Հայտնի է, որ լեզուների ուսուցումը նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, նրանց ճանաչողական, լեզվական, հաղորդակցական կարողությունների զարգացմանը, տրամաբանության խթանմանը, ուստի որքան հետաքրքիրու ակտիվ է ուսուցիչը պլանավորել դասը, այդքան դրական ու արդյունավետ է դասից ակնկալվող արդյունքը: Մանկավարժական աշխատողը պարտավոր է նպաստել ուսումնական հաստատությունում սովորողների կողմից հանրակրթական (հիմնական և լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, իրականացնել հանրակրթական ծրագրերը, ապահովել հանրակրթության պետական չափորոշիչով նախատեսված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման առավել արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ:

Ուսուցման թվայնացումն անխտիր կապված է այն փաստի հետ, որ համակարգիչը հանդիսանում է մտավոր զարգացման աղբյուր իր բոլոր առումներով: Ռ. Վիլյամը և Կ.Մակլին իրենց «Համակարգիչը դպրոցում» հոդվածի մեջ գրում են.

« Համակարգիչն ունի մի յուրահատկություն, որն ի հայտ է գալիս այն ուրիշին որպես ուսուցանելու գործիք օգտագործելիս, և նրա «անշունչ (անհոգի) » լինելն իրեն լավ օգնական է դարձնում գիտելիքներ ձեռք բերելու հարցում: Այս սարքը կարող է շատ «սիրալիր» կերպով շփվել

օգտվողի հետ և նույնիսկ որոշ պահերի ըմբռնումով մոտենալ և երբեք չբարկանալ և ցույց չտալ, որ ձանձրույթ է զգում, օրինակ նույն արտահայտությունը բազմաթիվ անգամներ կրկնելուց»: Այս իմաստով անհատական ուսուցման մեջ համակարգչի օգտագործումն ամենաօգտակար ձևերից մեկն է:

ՏՀՏ-ի կիրառումն ավելի ակտուալ դարձավ հեռավար ուսուցման ժամանակ և այդ ոլորտում հմտացան թե ուսուցիչները, թե սովորողները:

Հեռավար ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ, որոնք հեռավար դասընթացների նախագծման և իրագործման հիմքն են: Հեռավար ուսուցումը դիտվում է որպես ուսուցման ինքնուրույն ձև. այն չի կարող իրականացվել ուսուցման ավանդական ձևերով: Մինչև վերջին ժամանակները «հեռավար ուսուցում», «հեռակա ուսուցում», «բաց ուսուցում» հասկացությունները չէին տարանջատվում: Սակայն այժմ հեռավար ուսուցումն ապացուցել է իր կարևորությունն ու պահանջված լինելը: Մանկավարժական հանրությունը գիտակցում է, որ հեռավար ուսուցումը հեռանկարային է անընդհատ ուսուցման իրականացման առումով: Սակայն մինչ հիմա անպատասխան է մնում հետևյալ հարցադրումը. հեռավար ուսուցումը ուսուցման ինքնուրո՞ւյն ձև է, թե ուսուցման տեխնոլոգիա: Դա լուրջ խնդիր է, քանի որ դրանով է պայմանավորված հեռավար ուսուցման ռազմավարության իրականացումը և, համապատասխանաբար, դասախոսների պատրաստումը այդ ոլորտում աշխատելու համար:

https://www.isec.am/images/heravar_karger/Metodabanakan_uxecuyc.pdf

Անգլերեն լեզվի ուսուցման հիմնական նպատակը հաղորդակցության հմտությունների ձևավորումն է, իսկ մնացած բոլոր խնդիրները (կրթական, դաստիարակչական, զարգացնող) լուծվում են գլխավոր նպատակի իրականացման ճանապարհին: Առաջնային նշանակությունը տրվում է նյութն ընկալելուն, բովանդակության փոխանցմանը և իմաստի արտահայտմանը, որն էլ տանում է լեզվի քերականական կառույցների և բառերի անուղղակի ուսուցմանը: Վերջիններս սովորողը յուրացնում է անընդհատ շփման ընթացքում՝ առանց կենտրոնանալու քերականական կանոնները պարզապես անգիր անելու վրա:

Որպես ինֆորմացիոն համակարգ, համացանցն իր օգտատերերին առաջարկում է ինֆորմացիայի և պաշարների հսկայական տեսականի.

- Էլեկտրոնային փոստ(e-mail), տելեկոնֆերանսներ (usenet), վիդեոկոնֆերանսներ,

- Անձնական ինֆորմացիա հրապարակելու, անձնական էջ ստեղծելու և համացանցում տեղադրելու հնարավորություն,
- Մուտք ինֆորմացիոն պաշարներ
- Տեղեկատվական կատալոգ (Yahoo, InfoSeek/UltraSmart, LookSmart, Galaxy)
- Փնտրողական համակարգեր (Alta Vista, HotBob, Open Text, WebCrawler, Excite),
- Առցանց հաղորդակցություն (Chat)

Այս բոլոր ռեսուրսները /պաշարները/ կարող են օգտագործվել դասի ընթացքում: Հաղորդակցական և միջմշակութային հաղորդակցության հմտություններ ձեռք բերելն անհնարին է առանց հաղորդակցության պրակտիկայի և համացանցի պաշարների օգտագուրծումը օտար լեզվի դասի ընթացքում պարզապես դառնում է անհրաժեշտություն: Համացանցի վիրտուալ միջավայրը թույլ է տալիս դուրս գալ ժամանակի և տարածության հասկացությունների սահմաններից և կենդանի շփում է ապահովում իր օգտատերերի համար:

Նորարարական տեխնոլոգիաները՝ անգլերեն լեզվի դասավանդման գործիք | funny english for you

ՏՀՏ-ի մուտքը կրթական ոլորտ քիչ-քիչ փոխեց ավանդական պատկերացումները կրթության ու զարգացման մասին: Կարող ենք ասել, որ կրթության ոլորտում այդ միջոցների օգտագործումը կարող է շատ լավ արդյունքներ ունենալ: Մի բան պարզ է, մերօրյա սովորողներին, դուր է գալիս ՏՀՏ գործիքների կիրառումը դասավանդման ընթացքում, քանի որ դասի մեջ կա դինամիկա:

Աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները մարդկանց ստիպում են անընդհատ յուրացնել նոր գտելիքներ և հմտություններ, պատրաստ լինել շարունակական ուսման: Մանկավարժական տեսանկյունից քննարկվում են հետևյալ խնդիրները.

● կրթական որակի ապահովում.

● տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները լրացուցիչ կրթության մեջ.

● նոր տեղեկատվական տեխնոլոգիաները՝ որպես ստեղծական կարողությունների և մասնագիտական կողմնորոշման միջոց.

● կրթության հոգեբանական, մանկավարժական խնդիրները տեղեկատվական հասարակության պայմաններում.

● տեղեկատվական տեխնոլոգիաների դաստիարակչական ազդեցությունը.

● տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը անհատի մտավոր զարգացման վրա

● տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը երեխաների հոգեբանական զարգացման վրա:

https://lib.armedu.am/files/resource/files/2022-08-16/28b7bd1727b30905338065ea9a7e21a8.pdf

Համակարգիչը կարող է օգտագործվել ուսուցման բոլոր փուլերում՝ նոր նյութ բացատրելիս, ամրագրում, կրկնություն, գիտելիքների, հմտությունների և արողությունների վերահսկում: Ավելի հեշտ է դառնում որևէ թեմայի ատուցումը, երբ ունես ցուցադրման կամ խաղային տարբեր մեթոդներով կազմված վարժություններ: Այս պարագայում գործի են դրվում աշակերտի ոչ միայն լսողական և մատավոր կարողությունները, հասկանալու և ըմբռնելու աստիճանը, այլև օգնության են գալիս տեսողական , զգայական, էմոցիոնալ ապարատները, բարձրանում է ուշադրության մակարդակը և հետաքրքրվածությունը: Ստորև ներկայացնում եմ իմ կողմից պատրաստված խաղ-վարժությունները:

https://learningapps.org/display?v=pkzmrv7ck19

https://learningapps.org/display?v=p4eon6vsa17

https://learningapps.org/display?v=poyb657vj20

Նորարական տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ աշակերտներն առանց հասկանալու մտնում են դասի մեջ, սովորում են խաղալով, ոգևորված՝ հասկանալով ինչպես ներգրավվեցին դասին:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը ուսումնական գործընթացում լրացուցիչ հնարավորություն է սովորողների ուսուցման որակը բարելավելու համար: Այդ տեխնոլոգիաները եւ կրթական առցանց հարթակները կարող են ուսուցչին օգնել ավելի արդյունավետ լուծել հետեւյալ խնդիրները.

1.սովորողների ինքնուրույնության խթանում, աջակցություն նրանց անհատականության զարգացմանը,

2. անհրաժեշտության դեպքում հեռավար կրթության կազմակերպում,

3. սովորողների կրթական կարիքների առավելագույն բավարարում,

4. գիտելիքի անկախ ձեռքբերման եւ փոխանցման գործընթացի արդյունավետության բարձրացում,

5. սովորողների ՏՀՏ կարողությունների ձեւավորում,

6. ուսումնական գործընթացում ՏՀՏ-ի օգտագործման տեխնոլոգիաների կատարելագործում,

7. սովորողների պատկերավոր մտածողության զարգացում,

8. մեդիագրագիտություն, համացանցից օգտվելու կանոնների յուրացում:

Անգլերեն լեզվի ուսուցման նպատակներն են՝

➤Հաղորդակցական կարողությունների զարգացում:

➤ Ուսումնասիրվող լեզվի մշակույթի, պատմության, աշխարհագրության,

սովորույթների, ավանդույթների իմացություն:

➤ Սովորողների մոտ սեփական երկրի եւ այլ ազգերի մշակույթների հանդեպ հարգանքի ձեւավորում:

➤ Ինքնակրթությամբ զբաղվելու կարողության ձեւավորում:

Անգլերեն լեզվի ուսուցման խնդիրներն են՝

➤ Զարգացնել սովորողների լեզվական խոսքային, հանրամշակութային, գործաբանական, փոխհատուցման, ուսումնաճանաչողական կարողությունները:

➤Բարձրացնել դպրոցից դուրս սովորողի շփման վստահությունը:

➤Հարստացնել սովորողի օտարալեզվյան բառապաշարը:

➤Ձեւավորել ինքնուրույն բանավոր եւ գրավոր խոսք կառուցելու կարողությունները:

➤Զարգացնել ընթերցած նյութը վերլուծելու կարողությունը:

➤Զարգացնել սովորողների բանավոր խոսքը՝ կարդացածը ստեղծագործաբար վերարտադրելու, քննարկելու, տարբեր թեմաներով զրույցներ անցկացնելու, երկխոսություններ կառուցելու միջոցով:

➤Զարգացնել ընդհանուր խոսքային՝ խոսելու եւ լսելով հասկանալու, ինչպես նաև միջնորդավորված հաղորդակցման՝ ընթերցանության միջոցով օտար լեզվով նյութը հասկանալու եւ գրավոր խոսքին տիրապետելու հմտությունները:

Հաշվի առնելով օտար լեզվի ուսուցման ժամանակ սովորողների հնարավոր դժվարությունները՝ կարող ենք պնդել, որ ՏՀՏ-ի կիրառումը կրթական գործընթացում կարող է նպաստել տեսական մտածողության զարգացմանը, եւ բարելավել կրթական գործընթացի արդյունավետությունն ու լրացուցիչ խթան հանդիսանալ սովորողների սովորելու մոտիվացիայի բարձրացման համար: Միեւնույն ժամանակ սովորողը պետք է անպայման վերահսկվի այս հարթակում գործունեություն ծավալելիս:

Կրթական գործընթացում նոր տեխնոլոգիաների կիրառումը ժամանակակից դպրոցական կրթության հրատապ խնդիրն է: Այսօր անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ուսուցիչ ցանկացած առարկայի շրջանակում կարողանա անցկացնել դաս՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ: Սա ուսուցչին հնարավորություն է տալիս աշխատելու տարբերակված և անհատական ձևով, ինչպես նաև խնայում է ժամանակը: Այս ամենն ինձ հուշում է մանկավարժական նոր տեխնոլոգիաներ փնտրելու և դրանք կիրառելու իմ պրակտիկայում:

Ցանկացած առարկա կարելի է ինտեգրել ինֆորմատիկայի հետ: Ցավոք մեր դպրոցում միայն մեկ համակարգչային կաբինետ կա, մի փոքր դժվարություն է առաջանում տեխնոլոգիաների կիրառումը բոլոր դասերի ընթացքում: Բայց հնարավորության դեպքում ակտիվորեն կիրառում եմ տեղեկատվական տեխնոլոգիաները, քանի որ կարծում եմ, որ ներկայումս կրթական գործընթացի բարելավման հիմնական ուղղություններից մեկը հենց ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումն է տարբեր տեսակի պարապմունքների անցկացման համար:

1.2 Դասավանդման մեր փորձից

Ուսուցչի աշխատանքը երբեք էլ հեշտ չի համարվել: Ժամանակակից փոփոխվող աշխարհում ուսուցիչը պետք է քայլի ժամանակին համընթաց, անընդհատ կատարելագործվի եւ ուսուցման նոր ուղիներ գտնի: Հայտնի է, որ օտար լեզուների ուսուցցումը բավականին ժամանականտար ու դժվար գործընթաց է, ուստի ուսուցչի հիմնական խնդիրներից մեկն առարկայի նկատմամբ հետաքրքրության մեծացումն է, սովորողների մոտ ստեղծագործական եւ ինտելեկտուալ ուժեր արթնացնելու ցանկությունը: Անգլերենի իմացությունը ժամանակակից աշխարհում պատուհան է դեպի մեծ աշխարհ: Իմանալով միջազգային հաղորդակցության այս լեզուն՝ սովորողը, ով ապագայում պետք է
ընտրի մասնագիտություն, նոր հնարավորություններ, աշխարհը բացահայտելու մեծ գործիք է ունենալու իր գիտելիքների բանկում:

Այսպիսով, հղում անելով մեր մանկավարժական փորին՝ վստահաբար կարող ենք պնդել, որ անգլերենի դասավանդման գործումիաջողելու համար պետք է նախադրյալներ ստեղծել, որպեսզի սովորողն ունենա հետեւյալ հարցի պատասխանը՝ «Ինչու՞ է ինձ պետք սովորել անգլերեն» հարցը: Սովորողները պետք է տեսնեն իրենց աշխատանքի արդյունքները, կիրառեն իրենց գիտելիքները գործնականում: Իսկ ՏՀՏ գործիքների կիրառումը դասին լայն հնարավորություններ է ստեղծում այս առումով:

Մի բան հստակ է՝ նոր տեխնոլոգիաների մուտքը կրթական համակարգ փոխել է սովորողի կողմից նյութը պարզապես պատճենելու, մեխանիկորեն վերարտադրելու, անգիր անելու անհրաժեշտությունը՝ դրանով իսկ դինամիկա հաղորդելով սովորողի անհատականության զարգացմանը:

Դիտարկենք «անգլերեն» ուսումնական առարկայի դասավանդման շրջանակներում ՏՀՏ գործիքների կիրառմամբ սովորողների ինքնուրույն հետազոտական աշխատանքի օրինակ, որի հիմքը նախագծային մեթոդաբանությունն է:

ՏՀՏ-ի կիրառությամբ նախագծային աշխատանք անգլերենից

Դասարան՝8-րդ

Թեմա՝ << Sights of London>>

Միջառարկայական կապեր՝ «Աշխարհագրություն» «Ինֆորմատիկա»

Աշխատանքի տեւողությունը՝ 15 օր

Աշխատանքի նպատակը՝

Ծանոթացնել սովորողներին Լոնդոնի տեսարժան

վայրերին, հետաքրքիր սովորույթներին:

Զարգացնել սովորողների աշխարհաճանաչողությունը:

Նպաստել ՏՀՏ գործիքների կիրառման հմտությունների ձեւավորմանը:

Ձեւավորել անգլերենով հաղորդակցական հմտությունները:

Հարստացնել բառային պաշարը:

Խրախուսել կոլեկտիվ աշխատանքը:

Խթանել սովորողների ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ

Ուսուցիչը նախօրոք դասարանը բաժանեց երկու խմբի, որոնցից յուրաքանչյուրն աշխատեցին որոշակի առաջադրանքի վրա:

ԽՈՒՄԲ 1

Առաջին խմբում ընդգրկված են թվով 8 սովորող, ովքեր, օգտվելով համացանցային տեղեկատվական հարթակներից, հավաքեցին տեղեկություններ Լոնդոնի տեսարժան վայրերի վերաբերյալ , ապա Microsoft Office PowerPoint ծրագրի օգնությամբ պատրաստեցին ճանաչողական տեսասահիկ: Իհարկե պատրաստեցին տեղեկություն յուրաքանչյուր վայրի մասին:

https://drive.google.com/file/d/1lGehhTMjbK-v63zzfxamBlJPOlXr7hJY/view

ԽՈՒՄԲ 2

Այս խմբում ընդգրկված էր 7 սովորող: Կրկին օգտվելով համացանցային տեղեկատվական հարթակներից պատրաստեցին Website, որտեղ զետեղված էին Լոնդոնի տեսարժան վայրերի պատկերները և տեղեկություն այդ վայրերի վերաբերյալ: ԵՎ իհարկե խոսվեց Լոնդոնի աշխարհագրական դիրքի մասին, որն էլ եղավ միջառարկայական կապ աշխարհարություն առարկայի հետ:

http://english8a.netlify.app/

Այսպիսով, սովորողները ներկայաց8ին իրենց աշխատանքները, քննարկեցին ուսուցչի հետ, խոսեցին իրենց դժվարությունների եւ հաջողությունների մասին: Նշենք, որ ողջ աշխատանքի ընթացքում ուսուցչի կողմից որեւէ ներգործություն չի եղել, նա հանդես է եկել բացառապես խորհրդատուի, ուղղորդողի դերում: ՏՀՏ գործիքների կիրառմամբ սովորողների ինքնուրույն նախագծային աշխատանքի ավարտին ունեցանք հետեւյալ վերջնարդյունքները՝

- Սովորողները ծանոթացան Լոնդոնի տեսարժան վայրերի հետ և պլանավորեցին իրենց ապագա ճամփորդությունը դեպի Լոնդոն:
- Բավարարեցին սեփական հետաքրքրությունները, ընդլայնվեց նրանց բառապաշարը, խորացան նրանց գիտելիքները աշխարհագրությունից:
- Սովորողները հմտացան ՏՀՏ գործիքների կիրառման մեջ:
- Զարգացան նրանց թիմում համատեղ աշխատանքի հմտությունները, ձեւավորվեց դասընկերների կարծիքների նկատմամբ հանդուրժողականությունը, երկխոսություն վարելու, փոխզիջումներ փնտրելու եւ գտնելու կարողությունը:
- Զարգացավ սովորողների ինքնուրույնության եւ ինքնակազմակերպվելու կարողությունը: Կարծում ենք, որ ՏՀՏի կիրառումն անգլերենի դասավանդման ընթացքում օրապահանջ է, եւ մեծապես կարող է նպաստել սովորողների առաջադիմությանը, առարկաների ինտեգրված ուսուցմանը, լեզվական կարողունակության զարգացմանը: Այս նկատառումներից ելնելով՝ մեր դասը պլանավորելիս հաճախակի ենք դիմում ՏՀՏ գործիքներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրության արդյունքում կատարեցինք հետեւյալ եզրահանգումները՝

- Ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի մոտեցումներից, սեփական պարտականությունները գիտակցելուց եւ պատշաճ կատարումից:
- Ուսուցիչը պետք է ուղղորդի սովորողին, որպեսզի վերջինս ճիշտ օգտագործի համակարգիչն ու համացանցը:
- Պետք է սովորողին պաշտպանել կիբեռհարձակումից:
- Հարկավոր է դրական օրինակի օգնությամբ սովորողի մոտ բարձր արժեքներ ձեւավերել, ցույց տալ համակարգչի կրթող ու զարգացնող գործառույթը:
- Անգլերենի դասին ՏՀՏ գործիքների կիրառությամբ դասերն օգնում են սովորողների լեզվամտածողության, խոսքային կարողության զարգացմանը:
- Ուսուցիչը պետք է անդադար կատարելագործի իր մանկավարժական

հմտությունները, կիրառի նոր մեթոդական հնարներ, վստահելի հարաբերություններ ձեւավորի սովորողների հետ:

- Ժամանակի մարտահրավերներով պայմանավորված՝ ուսուցիչը պետք է գիտակցի տեխնոլոգիական հնարավորությունների անհրաժեշտությունը:

Հետադարձ կապը պետք է ուսուցչի համար դառնա ուսումնական գրծընթացը մշտադիտարկելու եւ համակարգելու գործիք;

- Անգլերենի դասին սովորողի համար պետք է ստողծել այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն պահանջված ու կարեւոր կզգա եւ բաց կլինի համագործակցության ու կարծիքների փոխանակման, երկխոսության համար:
- Ուսուցիչը պետք է ամեն կերպ փորձի համակարչային կախվածությունից զերծ պահի սովորողին՝ մշտադիտարկումներ իրականացնելով:

Կցանկանայինք ավելացնել, նաեւ, որ սույն աշխատանքը մեծ չափով կօգնի մեզ մեր մանկավարժական հետագա գործունեության ընթացքում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարոյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան:**

2.**https://lib.armedu.am/files/resource/files/2022-08-16/28b7bd1727b30905338065ea9a7e21a8.pdf**

3. Նորարարական տեխնոլոգիաները՝ անգլերեն լեզվի դասավանդման գործիք | funny english for you

4. https://www.isec.am/images/heravar_karger/Metodabanakan_uxecuyc.pdf

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Տեսահոլովակ - Sights of London.

London in 4K